ՀՏԴ 325 /479.243/
Պատմություն

Նունե ՍԱՐՈՒՄՅԱՆ
պ.գ.թ., ԱրՊՀ պատմության ամբիոնի դոցենտ

ՀԱՅԵՐԻ ՈՒՆԵԶՐԿՄԱՆ ՓԱՍՏԸ. ԹՈՒՐՔԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

Հոդվածում փորձ է կատարվում պատմական փաստերի, արխիվային փաստաթղթերի, թուրքական պատմագրության ներկայացուցիչների հրապարակումների հաղորդած տեղեկությունների հիման վրա լուսաբանել հայերի ունեզրկման ծրագրավորված, համակարգված թուրքական գործողությունները: Վերջին տարիներին թուրքական գիտական շրջանակների մի փոքր հատված, իր ուսումնասիրություններում պատմության նկատմամբ օբեկտիվ մոտեցում ցուցաբերելով , հնարավորություն է ընձեռել՝ բացահայտելու թուրքական կեղծարարությունը, հայերի ունեզրկման նրանց ծրագրերը, որի արդյունքում թուրքական կողմը իր պետական տնտեսական միջոցները կարգավորեց:

Հոդվածում ցույց է տրվում, որ թուրքական ժխտողականության հիմքում ընկած է բռնագրավված հայկական ունեցվածքի հարցը:

Բանալի բառեր՝ *ցեղասպանություն, ունեզրկում, խեղաթյուրում, փաստաթուղթ, բռնագրավում, հայկական պատմական հուշարձանների ոչնչացում, արխիվային վարչություն, հողային կալվածքներ, նյութական վնաս, թրքացման քաղաքականություն:*

Н.Сарумян

ЛИШЕНИЕ ИМУЩЕСТВА АРМЯН: ТУРЕЦКИЙ ПРОЦЕСС

В статье делается попытка на основе исторических фактов, архивных документов, на фактах, опубликованных в турецких историографических публикациях, выявить планированные и систематизированные действия турецкой стороны по лишению имущества армян.

В последние годы небольшая часть турецких научных деятелей в своих трудах отражало историю обьективно, что дало возможность выявить турецкую фальсификацию, открыто говорить об их программах по лишению имущества армян в следствие чего турецкая сторона урегулировала свое государственное экономическое положение.

В статье показано то, что в основе отказа Турции признать геноцид положен вопрос об конфискованном имуществе армян.

Ключевые слова: *геноцид, лишение имущество, подделка документов, ликвидация армянских исторических памятников, архивное управление, инвентаризация земель, материальный ущерб и политика фальсификации.*

N. Sarumyan

DEPRIVATION OF ARMENIAN PROPERTY: TURKISH PROCESS

The article attempts, on the basis of historical facts, archival documents, on the published facts of Turkish historiographic publications, to identify Turkish planned and systematic actions to deprive the image of Armenians.

In recent years, a small part of Turkish scientists in their writings objectively related to history, which made it possible to identify the Turkish falsification, to speak openly about their programs to deprive Armenians of their property, as a result of which the Turkish side settled its state economic position.

The article shows that the basis of the Turkish refusal to recognize the genocide is the question of the confiscated property of Armenians.

Keywords: *genocide, deprivation of property, document forgery, elimination of Armenian historical monuments, archive department, land inventory, material damage and falsification policy.*

Ակնհայտ է, որ թուրքական պատմագրությունը, խեղաթյուրելով պատմական փաստերը, անընդհատ ժխտում է Հայոց ցեղասպանությունը: Սակայն վերջին տարիներին բացահայտ է դարձել մի ուշագրավ երևույթ. այն է՝ թուրքական գիտական շրջանակների մի փոքր հատված իր ուսումնասիրություններում պատմության նկատմամբ սկսել է հանդես բերել օբեկտիվ մոտեցում:

Այդ հրատարակություններից ուշագրավ են Մեծ եղեռնի տարիներին երիտթուրքական, այնուհետև քեմալական և հանրապետական իշխանությունների կողմից իրականացրած հայերի ունեզրկման թեմային նվիրված Նևզաթ Օնարանի, Ալի Սայիթ Չեթինօղլուի, Թաներ Աքչամի, Ուղուր Ումիթի, Մեհմեդ Պոլաթելի և Ումիթ Քուրթի ուսումնասիրությունները[1]:

Հայ ժողովրդի հանդեպ երիտթուրքերի, ինչպես նաև Թուրքիայի Հանրապետության հիմնադիրների իրականացրած հանցագործությունների առարկայական պատկերի բացահայտմանը նպաստեցին վերջին տարիներին թուրք հետազոտողների կողմից տարբեր հարցերի հետ կապված՝ հրապարակված խոսուն վավերագրերի համեմատական քննությունը: Այդ հարցի լուսաբանմանը հանգամանորեն ուշադրություն է դարձրել թուրքագետ, ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի ավագ գիտաշխատող Անուշ Հովհաննիսյանը[2]: Նա Թուրքիայում հրապարակված

---

[1] *Տե՛ս Առաջին աշխարհամարտը և հայ ժողովուրդը.պատմություն և արդիական խնդիրներ, 1-2 հոկտեմբեր 2014թ., Զեկուցումների ժողովածու, Երևան, 2015, էջ 298:*

[2] *Տե՛ս **Հովհաննիսյան Ա.**, Քեմալ Աթաթուրքը և հայերի ունեզրկման գործընթացը. թուրքական փաստաթղթերի և հրապարակումների լուսաբանմամբ, հոդված, ՎԷմ համահայկական հանդես, 2011, թիվ 1, հունվար-մարտ:*

փաստաթղթերի միջոցով անդրադարձել է Քեմալ Աթաթուրքի հանցավոր քայլերի լուսաբանմանը:

2005 թ. Թուրքիայի կադաստրային վարչությունը ձեռնամուխ եղավ իր գերատեսչության շրջանակում գտնվող օսմանյան շրջանի փաստաթղթերի թուրքացման, թվայնացման, իսկ հետագայում՝ Պետական գլխավոր արխիվային վարչությանը հանձնելու TARBIS ծրագրին: Այդ աշխատանքներն իրականացնելու ընթացքում ի հայտ էին եկել որոշ փաստաթղթեր, որոնց մասին վարչությունը տեղեկացրել էր Ազգային անվտանգության խորհրդին: 2005 թ. օգոստոսի 26-ին գաղտնի նամակով ԱԱԽ Զինակոչի և պատերազմական գործողությունների նախապատրաստման ու պլանավորման բաժնի ղեկավար, բրիգադային գեներալ Թայար Էլմասը հայտնում էր, որ մատյաններում առկա տեղեկությունները կարող են տեղիք տալ «ցեղասպանության անհիմն պնդումների», օսմանյան վակուֆների պահանջների և նմանատիպ այլ անցանկալի շահարկումների: Ուստի նպատակահարմար է այդ նյութերը գաղտնի պահել և սահմանափակ անձանց կողմից օգտագործման իրավունք տրամադրել[1]:

Տեղեկատվական արտահոսքի հետևանքով այս լուրը հայտնվել էր որոշ թուրքական թերթերի էջերում՝ պարզաբանելով, որ մատյաններում նշված են անուն առ անուն այն մարդկանց ցուցակները, որոնք անշարժ գույքի տեր են եղել Թուրքիայում նախքան 1915 թ. դեպքերը:

Պետք է նշել, որ հայտնաբերված ցուցակները, անկասկած, «վտանգ» էին ներկայացնում արդի Թուրքիայի համար, հատկապես, եթե նկատի ունենանք այն հանգամանքը, որ օսմանյան պետությունում դարերի ընթացքում մշակվել էր ռայաներից հարկ հավաքելու նպատակով մանրակրկիտ գրառումներ կատարելու փորձը:

Ի դեպ, այս կապակցությամբ երիտասարդ հետազոտողների մի խումբ դիմել էր Հողի և փախստականների տեղավորման վարչության արխիվ՝ անհրաժեշտ տվյալներ ստանալու նպատակով: Դիտարկվել էին Քիլիս, Անթաքիա, Իդլիբ, Ջիսր ալ-Շուղուր բնակավայրերի տեղական արխիվային նյութերը: Նրանցում բազմաթիվ երկրորդական փաստաթղթերի կողքին առկա էին նաև կոնկրետ ունեցվածքի մասին նշումներ (կով, ալրաղաց, կոշիկ, կահկարասի և այլն), սակայն բացակայում էին վերջիններիս տերերի անունները[2]: Այս բացահայտումների արդյունքում հայերի լքյալ գույքի թեման Թուրքիայում հանրային քննարկման առարկա դարձավ:

Հայտնի է, որ պատմության արդի հանգրվանում հայերի սեփականության վերադարձի խնդիրն առաջին անգամ բարձրաձայնվել է 1984 թ. Ժողովուրդների Մշտական տրիբունալում՝ Տիգրան Քույումջյանի «Հայոց

---

[1] *Տե՛ս http://bianet.org/bianet/insan-haklari/85432-osmanli-arsivleri-acilirsa-resmi-tez-zayiflar*

[2] *Տե՛ս http://www.birikimdergisi.com/guncel-yazilar/746/ermeni-emval-i-metrukeleri-uzerine#.XMDUXYkzbIV*

սեփականության բռնագրավումը և հայկական պատմական հուշարձանների ոչնչացումը որպես ցեղասպանության գործընթացի արտահայտություն» զեկույցում[1] : Վերջինս հիշատակում էր, որ հայերի բանկային հաշիվներից գոյացած շուրջ 30.000 կգ ոսկին (5 մլն. թուրքական ոսկե լիրա), ըստ Մեծ Բրիտանիայի նախկին վարչապետ Ջեյմս Բոլդուինի՝ վարչապետ Մաք Դոնալդին ուղղված զեկուցագրի, թուրքերի կողմից ուղարկվել էր Գերմանական կայզերական բանկ: Այսօր այդ գումարը կկազմեր ավելի քան 320 միլիոն ԱՄՆ դոլար՝ գումարած տոկոսները:

Բացի բանկային հաշիվների բռնագրավումից, Թուրքիայի կառավարությունը փորձ է արել տիրանալ նաև հայերին պատկանող այլ արժեթղթերի, մասնավորապես՝ ապահովագրական վկայականներով նախատեսված գումարներին: 1916 թ. Օսմանյան կայսրության ներքին գործերի նախարար Թալեաթը ԱՄՆ-ի դեսպան Հենրի Մորգենթաուի հետ զրույցում հարցնում էր, թե կարող է արդյոք վերջինս իրեն ներկայացնել ամերիկյան ապահովագրական ընկերություններում ընդգրկված հայերի ցուցակը: «Նրանք բոլորը մահացել են՝ չթողնելով ժառանգներ», «ուրեմն այդ ապահովագրերի գումարները օրինաբար պետք է անցնեն օսմանյան պետությանը»[2],-եզրակացնում էր նա :

Միևնույն ժամանակ, օսմանյան կառավարությունը հայտարարություններով դիմել էր այլ ընկերությունների՝ հայերի անունների վերաբերյալ տեղեկություններ ստանալու խնդրանքով: Մանրամասն տեղեկություններ էին հավաքվել, թե ինչպիսի սեփականություն ունեին հայերը՝ դեպոզիտ, ապահովագրեր, արժեթղթեր, տներ, հողային կալվածքներ, գործարաններ, խանութներ, ընկերություններ [3]:

Սակայն, եթե Օսմանյան կայսրության հայերի համայնքային սեփականության մասին տեղեկությունները հայտնի են, ապա անհատական սեփականության հաշվառումն այսօր շատ դժվար է: 1912-13 թթ. Օսմանյան կայսրության ներքին գործերի նախարարության հանձնարարությամբ Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանը կազմել և կառավարությանն էր ներկայացրել կայսրության տարածքում գտնվող հայկական վանքերի և եկեղեցիների լիակատար ցուցակը:1992 թ. դոկտոր Ռայմոն Գևորգյանը հրապարակել է առավել ամբողջական ցուցակ, որում նշվում էին, չհաշված Կ. Պոլիսը՝ 2538

---

[1] *Տե՛ս Զեկույցի լրամշակված տարբերակը տե՛ս Dickran Kouymjian, Confiscation of Armenian Property and the Destruction of Armenian Historical Monuments as a Manifestation of the Genocidal Process: Տես՝ ՎԷմ համահայկական հանդես, 2011, թիվ 1, հունվար-մարտ, էջ 11:*

[2] ***Մորգենթաու Հ.**, Հուշեր, Փարիզ, 1919, էջ 292:*

[3] ***Kévork K. Baghdjian,** La confiscation par le gouvernement turc, des biens arméniens dits "abandonnés", Montréal, 1987, pp. 270-280:*

եկեղեցի, 451 վանք և 2000 կրթօջախ: Ցուցակի մեջ չի մտնում Հայ կաթոլիկ և Հայ բողոքական եկեղեցիներին պատկանող գույքը[1]:

Փարիզի խաղաղության համաժողովում հայկական պատվիրակությունների ղեկավարներ Ավետիս Ահարոնյանը և Պողոս Նուբարը ներկայացրել էին հայերի կրած վնասների վերաբերյալ զեկույց, որում կրած վնասը հաշվարկված էր մոտավորապես 14,5 մլրդ ֆրանկ: 1990 թ. դա կազմում էր մոտավորապես 100 մլրդ դոլար[2]: (Հայոց ցեղասպանության հետևանքով հայերի կրած նյութական վնասների մասին մանրամասն տեղեկություններ են հաղորդում նաև ArmenianGenocide100.org-ը . «Ըստ հաշվարկների՝ Ցեղասպանության վնասի ընդհանուր չափը գերազանցում է 3 տրլն դոլարը»):

1915 թ. հունիսին՝ «Տեղահանության մասին» օրենքի հրապարակումից անմիջապես հետո, արձակվել էր վարչական կարգադրություն՝ պատերազմական և արտակարգ քաղաքական իրավիճակի պատճառով տեղահանված հայերի լքյալ շարժական և անշարժ գույքի վերաբերյալ: Համաձայն վերը նշված կարգադրության՝ տեղական մակարդակով հատուկ հանձնաժողովներ էին կազմվելու՝ երկու վարչական և մեկ ֆինանսական ներկայացուցիչներից, որոնք պետք է մանրամասն գույքագրեին հայերի ունեցվածքը (3 օրինակից): Պատճեններից մեկը տրվում էր գույքի տիրոջը, մյուսը պահվում էր տեղական համայնքում, որպես կանոն՝ եկեղեցում, իսկ երրորդը ուղարկվում էր Օսմանյան պետական գանձարան: Ի թիվս այլ հանգամանքների՝ այս իրողությունը դարձավ եկեղեցիները հարձակումների, հրկիզումների առաջին թիրախի վերածվելու պատճառներից մեկը:

Այդպիսի թղթեր հայերին տրվեցին և նրանց շարժական գույքը՝ անասուններ, կահկարասի և այլն, վաճառվեց աճուրդով, և գումարները դրվեցին հայերի անունով: Հետագայում այս պաշտոնական գրություններից մի քանիսը հրատարակել է Յուսուֆ Հալաջօղլուն՝ «Թուրքական պատմական ընկերության» նախկին նախագահը՝ փորձելով ցույց տալ, թե որքան «հոգատար» է եղել օսմանյան կառավարությունը տեղահանվող հայերի նկատմամբ: Ի դեպ, տեղահանման ծախսերը ևս կատարվում էին նույն՝ տեղահանվածների հաշվին:

Սակայն դրանից 4 ամիս անց՝ 1915 թ. սեպտեմբերի 26-ին, հրապարակվում է նոր հրամանագիր, որով կարգավորվում էր աճուրդից դժգոհ անձերի՝ հանձնաժողովների գործողությունները բողոքարկելու և ունեցվածքն ըստ պահանջի հետ ստանալու կարգը, որի համար նախատեսված էր 15 օր: Օրենքում, իհարկե, նշված չէր, թե ինչպես կարող էին Դեր-Զոր քշվածները կամ սպանվածները հետևել այդ ընթացակարգին: Այսպես՝ Սարգիս

---

[1] *Տե՛ս* ***Սաֆրաստյան Ա.,*** *Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարքարանի կողմից Թուրքիայի արդարադատության և դավանանքների մինիստրությանը ներկայացված եկեղեցիների և վանքերի ցուցակներն ու թաքրիրները (1912-1913), «Էջմիածին», Ա (հունվար), 1965, էջ 42;*

[2] *Տե՛ս http://www ArmenianGenocide100.org*

Չերկեզյանն իր «Աշխարհը բոլորիս է բավարար» գրքում հուշագրություն է զետեղել, որի համաձայն՝ Քարամանում իր ունեցվածքին տեր կանգնել ցանկացած իր հորը՝ Ղազարոսին, փաստաբանը երկու ճամփա է ցույց տվել՝ կամ լռել, կամ կախաղան բարձրանալ [1] :

Իրականում հայերին պատկանող գույքի թալանը տեղի էր ունենում տեղն ու տեղը. գորգերը, արծաթյա և ոսկե իրերը, հագուստը ոստիկաններն ու ժանդարմներն էին վերցնում, մանր կահկարասին՝ տեղի խուժանը: Որոշ դեպքերում աճուրդ իսկապես իրականացվում էր, բայց գոյացած գումարը իշխանավորներն իրենք էին գրպանում, այլ ոչ թե դնում հայերի հաշվին: Զավեշտական պատկեր է ներկայացրել արաբ Ֆայեզ ալ-Ղուսեյնը. «5 լիրա արժեք ունեցող կոստյումը վաճառվում էր 2 մեջիդիեյով, թանկարժեք սպասքը մանրադրամ արժեր, իսկ հին արժեքավոր դաշնամուրը որևէ մեկը չէր գնում: Մանրանկարներով գիրքը տրվեց պանրավաճառին՝ շուկայում վաճառելիս պանիր փաթաթելու համար»[2]: Անշարժ գույքը օգտագործվելու էր պետության հայեցողությամբ, իսկ երբեմն տրվում էր բանակին, որպես կայանատեղի, դառնում էր հոսպիտալ, պահեստ, կամ էլ Բալկաններից տեղահանվածներին տեղավորում էին հայերի տներում:

Պետք է նշել, որ հայերի, ինչպես նաև հույների սեփականությանը տիրանալու ծրագրերը կազմվել էին շատ ավելի վաղ: 1908-1909 թթ. օսմանյան ֆինանսների նախարարության տվյալներով՝ Թուրքիայի պարտքը գերազանցում էր բյուջեի 1/3-ը: Իսկ Բալկանյան պատերազմները վերջնականապես քամեցին բյուջեն, Թուրքիան զրկվեց իր հարկատու շատ տարածքներից: Դրան հետևեց եռյակի հեղաշրջումը՝ 1913 թվականին, որոնք ամեն ինչ առան իրենց ձեռքը: Նրանք սկսեցին իրականացնել Զիյա Գյոքալփի նախանշած «milli iktisad»-ը՝ տնտեսության թուրքացման ծրագիրը: Ծխախոտի, շաքարի մենաշնորհի վերահսկումը նրանց աստղաբաշխական եկամուտներ ապահովեց: Հատուկ հանձնաժողովներ ստեղծվեցին, որոնք թիրախային խմբերի փորձագիտական ուսումնասիրություններ անցկացրին՝ «ազգայնացումը» արագ իրագործելու համար: Այդ ծրագրի համակարգողն էր Շյուքրյու Քայան: Պատմության ապագա կեղծարար Էսաթ Ուրասը զբաղվում էր հայերով, Ջելալ Բայարը՝ հույներով, Զեքերյա Սերտելը՝ ալեվիներով:

Այս ծրագրի հեռահար նպատակն էր տնտեսական լծակները վերցնել այլազգիների ձեռքից: Պատերազմը «նվեր» էր նման ծրագիրն իրականացնելու համար: Այս նպատակին էր ուղղված, մասնավորապես, Թալեաթ փաշայի 1916 թ. հունվարի 6-ի հրամանագիրը, համաձայն որի՝ հայերի ընկերություններից պետք է ստեղծել մահմեդական ընկերություններ, բաժնետոմսեր թողարկել և բաժանել «ազնիվ մուսուլմաններին», որպեսզի կապիտալը չընկնի օտարների ձեռքը: Օրինակ՝ Դիարբեքիրի մետաքսի

---

[1] *Տե՛ս **Չերկեզյան Ս.**, Աշխարհը բոլորիս է բավարար, Ստամբուլ, 2003, էջ 59:*

[2] *Տե՛ս **Ֆայէզ ալ-Ղուսեյն**, Հերոսական հայութեան անցեալէն: Զարդերը Հայաստանի մէջ (ականատեսի վկայութիւններ), Գահիրէ, 1960, էջ 25-30:*

գործարանի տեր Թրփանջյանը տանջամահ արվեց բանտում, տեղի վալի (նահանգապետ) Նեջդեթը տիրացավ նրա շքեղ տանը, իսկ գործարանը անմիջապես անցավ մուֆթիի որդուն՝ Մուֆթիզադե Հուսեյնին[1] :

Ի դեպ, երբ Դիարբեքիրում հայերի տեղահանությունը իրականացրած դոկտոր Մեհմեդ Ռեշադին հարցնում են, թե արդյոք բժիշկ լինելու հանգամանքը չի խանգարել նրան իրականացնել ոճիրները, նա շատ հանգիստ պատասխանում է. «Ես թուրք եմ, ես պետք է ոչնչացնեմ ոչ թուրքերին՝ չսպասելով, որ նրանք ինձ ոչնչացնեն և հետո, մի՞թե բժշկի գործ չէ միկրոբներից ազատվելը»[2]:

Այդ ճանապարհով Առաջին աշխարհամարտի ընթացքում Օսմանյան կայսրության պետական բյուջեն, հակառակ պատերազմական ծանր պայմաններին, հետևյալ աննախադեպ աճ արձանագրեց. 1913-14 թթ.՝ 35 մլն օսմ. ոսկի, 1915-16թթ.՝ 38 մլն, 1917-18 թթ.՝ 85 մլն: 1918 թ. կայսրության ողջ պատմության ընթացքում առաջին անգամ երիտթուրքական իշխանությունները թողարկեցին 19 մլն օսմանյան ոսկուն համարժեք արժեթղթեր: Պարզ է, որ պետական գանձարանը լցվել էր հայերի ինչքի և կալվածքների հաշվին[3] :

1918 թ. հոկտեմբերի 30-ի Մուդրոսի զինադադարը նշանավորեց Օսմանյան Թուրքիայի լիակատար պարտությունը Առաջին աշխարհամարտում: Ուստի սուլթան Մեհմեդ VI-ի կառավարման օրոք նորանշանակ կաբինետի ներքին գործերի նախարար Ահմեդ Իզզեթ փաշայի 1918 թ. նոյեմբերի 1-ի հրամանագրով նախատեսվում էր հայերից բռնագրավված հողերի և գույքի վերադարձը իրենց օրինական տերերին՝ նրանց վերադարձի և պահանջ ներկայացնելու դեպքում: Այդ հրամանագիրը կարելի է որպես ճակատագրի հեգնանք գնահատել, քանզի այնտեղից, ուր «ուղարկվել էին» հայերը, վերադարձ չկար: Սակայն այն հեռանկարը, որ Եղեռնից մազապուրծ եղած թեկուզև փոքրաթիվ հայությունը կարող է հնարավորություն ստանալ վերադարձնել իր ունեցվածքը, հանգիստ չէր տալիս թուրք ազգայնական ուժերին:

2010 թ. Ստամբուլում հրատարակվեց Նազաթ Օնարանի[4] «Լքյալ գույքի դեպքը. հայկական և հունական ունեցվածքի թրքացումը օսմանյան և հանրապետական շրջանում» մենագրությունը, որն ավելի ծավալուն՝ երկու

---

[1] *Տե՛ս* ***Uğur Ümit Üngör,*** *'A reign of terror'. CUP rule in Diyarbekir Province, 1913-1923, Amsterdam, 2005, pp. 16, 20, 61-63: Տես՝ Վէմ համահայկական հանդես, 2011, թիվ 1, հունվար-մարտ, էջ 15:*

[2] *Նույն տեղում:*

[3] ***Հովհաննիսյան Ա.****, Ցեղասպանության ժխտումը և էթիկան (թուրքական ազգայինպետության կազմավորման որոշ հարցերի լույսի ներքո), «Թուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ», հ. IV, Եր., 2006, էջ 124-129:*

[4] *Զեկուցումների ժողովածու…, էջ 298:*

հատորով վերահրատարկվեց 2013-ին[1] : Ըստ Նազաթ Օնարանի՝ 1910-ական թվականների կեսերից երիտթուրքական իշխանությունները սկսեցին իրականացնել Փոքր Ասիայի թրքացման քաղաքականությունը, որի տնտեսական քաղաքականությունն իրականացվեց հայերի և հույների սեփականության թրքացմամբ[2]: Հեղինակն իր ուսումնասիրության մեջ անդրադառնում է երիտթուրքական իշխանությունների կողմից ընդունված «Լքյալ գույքերի մասին» իրավական ակտերին, որոնք հայերի տեղահանությունից հետո օրինական հիմքերի վրա դրեցին նրանց թողած շարժական և անշարժ գույքերի կողոպուտն և յուրացումը: Այսպես, 1915 թ. հունիսի 10- ին երիտթուրքական իշխանությունները հրապարակեցին հայերի թողած գույքերի հետ վարվելու վերաբերյալ «Լքյալ գույքերի մասին» 34 հոդվածից բաղկացած հրահանգները, այնուհետև 1915 թ. սեպտեմբերի 13-ին օսմանյան խորհրդարանն ընդունեց «Լքյալ գույքերի մասին» ժամանակավոր օրենքը, իսկ նույն թվականի հոկտեմբերի 26-ին՝ այդ օրենքի գործադրման կանոնադրությունը[3]:

Այսպիսով, օրինականացվեց հայերի շարժական և անշարժ գույքերի, ամբողջ հարստության բացահայտ կողոպուտն ու յուրացումը, որն արդեն իսկ իրականացվում էր Օսմանյան կայսրության ողջ տարածքով մեկ[4] : Հեղինակն իր ուսումնասիրության մեջ կանգ առնելով այս իրավական ակտերի հիման վրա ստեղծված Լքյալ գույքերի հանձնաժողովների կողմից իրականացրած կողոպուտի և յուրացման գործողություններին՝ պնդում է, որ Լքյալ գույքերի հանձնաժողովների արձանագրությունները կարող են իրական պատկերացում տալ հայերի կրած նյութական կորուստների մասին[5]: Ըստ Նազաթ Օնարանի՝ ողջ արևմտահայության հարստությունը հափշտակվել և բաժանվել է թուրքերին և, ընդհանրապես, մահմեդականներին: Հայկական ունեցվածքի կողոպուտի հաշվին միանգամից հարստացողների մի ստվար զանգված է գոյացել: Ողջ հասարակությունը լուռ կերպով մեղսակից է եղել այդ ոճրին, որովհետև բոլորը համոզված էին, որ իրենց բաժին պետք է հասնի այդ համատարած կողոպուտից[6]: 1920 թ. հունվարի 8-ին Կ.Պոլսո կառավարությունը հայերի ունեցվածքը վերադարձնելու մասին որոշում է ընդունում, սակայն քեմալական իշխանությունները, 1923 թ. ապրիլի 15-ին

---

[1] *Տե՛ս* ***Nevzat Onaran****, Emval-i metruke olayı, Osmanlı'da ve Cumhuriyette Ermeni ve Rum Mallarının Türkleştirilmesi, Istanbul, 2010.*

[2] *Տե՛ս* ***Նազաթ Օզյուն****, Թուրք ազգայնականության «արյունոտ» տնտեսական քաղաքականությունը, (Նազաթ Օնարանի Emval-i metruke olayı, Osmanlı'da ve Cumhuriyette Ermeni ve Rum Mallarının Türkleştirilmesi գրքի մասին գրախոսական), http://akunq.net/am/?p=3874.*

[3] *Տե՛ս Զեկուցումների ժողովածու, էջ 299*

[4] *Տե՛ս* **Nevzat Onaran**, *Emval-i metruke olayı, Osmanlı'da ve Cumhuriyette Ermeni ve Rum Mallarının Türkleştirilmesi, Istanbul, 2010. s. 33-34.*

[5] *Տե՛ս Նույն տեղում, էջ 48, 74:*

[6] *Տե՛ս Նույն տեղում, էջ 65:*

հրապարակելով 333 թվակիր օրենքը, շարունակում են իրականացնել հայերի ունեզրկման երիտթուրքերի կիսատ թողնված գործը: Հանրապետական շրջանում կրկին գործողության մեջ է դրվում Լքյալ գույքերի հանձնաժողովը, որը պարտականություն ուներ իրականացնելու հայերի և հույների գույքերի լուծարման գործընթացը: Վերը նշված օրենքը ուժի մեջ է մնում մինչև 1988 թ. նոյեմբերը[1]: Նևզատ Օնարանի բերած փաստերի համաձայն՝ թուրքական պետությունն իր տնտեսությունը թրքացնելուց զատ, հայերի ունեցվածքից իրացված գումարներով հոգացել է իր բազում կարիքները: Օրինակ՝ Ֆինանսների նախարարությունում պահվող հայկական հարստությունը հանրապետության շրջանում պարբերաբար փրկել է Թուրքիային՝ պետությանը դուրս բերելով տնտեսական ճգնաժամերից: 1928 թ. Թուրքիայի Հանրապետության կառավարությանը Ֆինանսների նախարարությունում պահվող, հայերից բռնագրավված գումարներից 1929 թ. տնտեսական ճգնաժամի սրման ժամանակ պետական բյուջե փոխանցեց 300.000 լիրա[2]: Ի դեպ, եթե միայն բյուջեի բանկային աճը նկատի ունենանք, ապա այն այսօր կկազմի 300.000 000 լիրա[3]: Նման փոխանցումներ շարունակվել են նաև հետագա տարիներին[4] :

2011 թ. Լոնդոնում անգլերեն լեզվով հրատարակվեց Ուղուր Ումիթ Ունգյուրի և Մեհմեդ Պոլատելի «Բռնագրավում և գաղութացում» մենագրությունը, որում հեղինակները բազմաթիվ փաստերով հիմնավորում են, որ հայերի ունեզրկումը ղեկավարվել է երիտթուրքական իշխանությունների կողմից: Ահա այդ փաստերից: Ադանայի հայության տեղահանությունից հետո Թալեաթ փաշան 1915 թ. սեպտեմբերի 8-ին հրամայում է ադանահայերի գործարանները, արհեստանոցները և խանութները փոխանցել թուրքերին[5] : Թալեաթ փաշան հրաման է արձակել նաև հայերի տներում բնակեցնել Բալկաններից գաղթած թուրք գաղթականներին և հայերի ունեցվածքի վաճառքից գոյացած գումարներով ապրուստի միջոցներ տրամադրել նրանց1[6]: Ուղուր Ումիթը և Մեհմեդ Պոլատելը անդրադառնում են այն իրողությանը, որ հարուստ կողոպուտի հեռանկարը համախոհների լայն զանգվածներ է հավաքագրել երիտթուրքերի իշխանությունների շուրջ: Երիտթուրքերի վարչակազմը հայերի լքյալ գույքերը հանձնել է նրանց բնակավայրերի իշխանություններին, նախարարություններին շռայլորեն տրամադրել շենքեր և հողատարածքներ, իսկ փոխարենը՝ գտել համախոհների հսկա բանակ և նրանցից ստացել

---

[1] *Տե՛ս Նույն տեղում, էջ 153-157:*

[2] *Տե՛ս Զեկուցումների ժողովածու, էջ 300:*

[3] *Տե՛ս* ***Nevzat Onaran****, Emval-i metruke olayı, Osmanlı'da ve Cumhuriyette Ermeni ve Rum Mallarının Türkleştirilmesi, Istanbul, 2010. էջ 271:*

[4] *Տե՛ս Նույն տեղում, էջ 248:*

[5] *Տե՛ս* ***Uğur Ümit Üngör and Mehmet Polatel****, Confiscation and Distruction, Continuum International Publishing Group, London, 2011, p. 113.*

[6] *Տե՛ս Նույն տեղում, էջ 114:*

աջակցություն, հայերի բնաջնջումն իրականացնելու համար11[1]: Հիշատակության է արժանի այն իրողությունը, որ թուրք իշխանավորները, հայերից մեծ գումարներ վերցնելով, հետաձգել են նրանց տեղահանությունը: Օրինակ՝ Ադանայի իշխանությունները պարբերաբար գումարներ են վերցրել տեղի հարուստ հայերից և հետաձգել նրանց տարագրումը: Եվ այդ տևել է այնքան ժամանակ, մինչև սպառվել են հայերի գումարները, որից հետո նրանք տեղահանվել են[2]: Գրքում տարբեր փաստերով հիմնավորվում է, որ Մուստաֆա Քեմալի ղեկավարած ազգայնական պայքարի շարժիչ ուժը եղել է հայերից բռնագրավված ունեցվածքը: Հայերի ինչքերի յուրացումով հարստացած թուրք ու քուրդ երևելիներն են ֆինանսավորել ազգայնական շարժումը: Նրանք ֆինանսավորել են նաև բանակից դուրս գործող ավազակախմբերին, որոնք ազգայնական շարժման հիմնական ուժն էին[3]: Հեղինակներն անդրադարձել են նաև վերապրած հայության նկատմամբ քեմալական իշխանությունների վարած տեղահանության, կոտորածի և կողոպուտի քաղաքականությանը[4]: Երկիրը հայաթափելուց հետո, հայերի թողած ունեցվածքի յուրացման գործին օրինական հիմք տալու համար քեմալական իշխանությունները երիտթուրքական իշխանությունների նման իրավական հիմքի վրա են դրել այն: Անկարայի Ազգային մեծ ժողովը 1922-1929 թթ. ընդունել է «Լքյալ գույքերի մասին» 9 օրենք[5]: Ուղուր Ումիտն ու Մեհմեդ Փոլատելը գտնում են, որ ժամանակակից Թուրքիայի տնտեսությունը գրեթե ամբողջապես հենված է հայերից բռնագրավված ունեցվածքի վրա, և, որ հայերի տնտեսության ոչնչացումը հիմք է դրել թուրքական տնտեսության զարգացմանը[6]: Ալի Սայիթ Չեթինօղլուն թուրքական և արտասահմանյան մի շարք հեղինակավոր պարբերականներում հրատարակած իր ուսումնասիրություններում, հոդվածներում և հրապարակային ելույթներում բազմիցս անդրադարձել է օսմանյան և հանրապետական շրջաններում թուրքական իշխանությունների իրականացրած հայերի ունեզրկման թեմային:

2011 թ. Ստամբուլում հրատարակել է «Ունեցվածքի հարկը 1942-1944 թթ. տնտեսական և մշակութային ցեղասպանություն» աշխատությունը: Չեթինօղլուն ներկայումս աշխատում է «Թուրք բուրժուազիան և թուրքական ունեցվածքի գաղտնի կողմը» գրքի վրա, որը նվիրված է հայկական և հունական ունեցվածքը զավթած թուրք-մահմեդական հարստութեան

---

[1] *Տե՛ս Նույն տեղում, էջ 167: Զեկուցումների ժողովածու, , էջ 301*
[2] *Տե՛ս Նույն տեղում, 117-118:*
[3] *Տե՛ս Նույն տեղում, էջ 124:*
[4] *Տե՛ս Նույն տեղում, էջ 145-146:*
[5] *Տե՛ս Նույն տեղում, էջ 124, 145-146:*
[6] *Տե՛ս Նույն տեղում, էջ 168: 302*

թեմային[1]: Չեթինօղլուն առանձին հոդվածներով հանդես է եկել երիտթուրքական իշխանությունների կողմից Մարդինի[2], Տիգրանակերտի Արգանա բնակավայրի հայերի ունեցվածքի բռնագրավման և յուրացման պատմությանը[3]: Ուսումնասիրել է երիտթուրքական և հանրապետական իշխանությունների կողմից թուրքական բանկերում հայերի՝ ի պահ տրված ավանդների յուրացման մասին Թուրքիայի արխիվներում պահվող փաստաթղթերը և այդ թեմայով հրատարակել աշխատություն[4]:

Սաիթ Չեթինօղլուն փաստերով ներկայացնում է, թե ինչպես հայերի ինչքերի և կալվածքների կողոպուտի հաշվին լցվել է Օսմանյան կայսրության պետական գանձանակը և պետական բյուջեն, հակառակ պատերազմական ծանր պայմաններին, հետևյալ աննախադեպ աճն է արձանագրել. 1913-1914 տարեշրջանում շուրջ 35 միլիոն օսմանյան ոսկի, 1915-1916 թթ.՝ 38 միլիոն, իսկ 1917-1918 թվականներին այն հասել է 85 միլիոնի: Ավելին, 1918 թ. կայսրության ողջ պատմության ընթացքում, առաջին անգամ, երիտթուրքական իշխանությունները թողարկել են 19 միլիոն օսմանյան ոսկուն համարժեք արժեթղթեր[5]: Իր ուսումնասիրություններում Չեթինօղլուն մշտապես փաստում է հայերի ունեզրկման գործընթացին հանրապետական իշխանությունների մեծ մասնակցության մասին: Նա գրում է, որ միակուսակցական շրջանում Անկարայի Ազգային մեծ ժողովում կամ Ժողովրդական կուսակցության բարձրաստիճան ղեկավարության կազմում գտնվող անձանցից բոլորը, գրեթե առանց բացառության, Հայոց ցեղասպանության միջոցով հարստացածներն են: Աթաթուրքն էլ բացառություն չի կազմում նրանց մեջ[6]:

Ավելին, այսօրվա Արդարություն և զարգացում կուսակցության անդամների մեջ ևս կան հայերի ունեցվածքը բռնագրաված անձանց երեխաներ և թոռներ[7]: Սայիթ Չեթինօղլուն գտնում է, որ ժամանակակից

---

[1] *Տե՛ս Թուրք հայտնի պատմաբան Սայիթ Չեթինօղլուի հետ հանդիպում Արևմտահայոց հարցերի ուսումնասիրության կենտրոնում, http://akunq.net/am/?p=30660*

[2] *Տե՛ս Տեղահանության ենթարկված Մարդինի հայերի՝ 1915 թ. բռնազավթված և 1915 թ. Ցեղասպանությունից հետո պետության ու մասնավոր անձանց կողմից օգտագործված հայկական գույքի օրինակներ, http://akunq.net/am/?p=27529*

[3] *Տե՛ս **Սայիթ Չեթինօղլու** 1915 թ. ցեղասպանությունը Դիարբեքիրի Էրգանիում (Արգանա) և հայկական ունեցվածքի բաժանումը, http://akunq.net/am/?p=32813.*

[4] *Տե՛ս **Sait Çetioğlu**, 1915 Soykırımının T. C. Merkez Bankası Kayıtlarındaki İzleri-1. bölüm, http://hyetert.blogspot.com/2011/08/1915-soykrmnn-t-c-merkez-bankas.html.*

[5] *Sait Cetinoglu, Sermayenin Turklestirilmesi, Resmi Tarih Tartışmaları -2, Ed. Fikret Başkaya, ozgfr niversite Kitaplığı, 2006- Ankara, s.131. 303*

[6] *Տե՛ս **Սայիթ Չեթինօղլու**, 2015 թ.՝ 100-ամյա տարելիցի սինդրոմի շուրջ, http://akunq.net/am/?p=30783.*

[7] *Տե՛ս **Ռուքեն Ադալը**, Թուրքիայում գտնվող հարստության աղբյուրը բռնագրավված հայկական ունեցվածքն է (Հարցազրույց Սայիթ Չեթինօղլուի հետ), http://akunq.net/am/?p=18338.*

Թուրքիան կառուցվել է Հայոց ցեղասպանության ընթացքում ձեռք բերված նյութական, քաղաքական, ռազմական և այլ շահույթների հիմքի վրա[1]:

2012 թ. Ստամբուլում հրատարակվեց Թաներ Աքչամի և Ումիթ Քուրտի «Օրենքների ոգին. հետևել ցեղասպանության հետքին «Լքյալ գույքերի մասին» օրենքներում» ուսումնասիրությունը, որում օսմանյան և հանրապետական օրենքների լույսի ներքո քննվում է Հայոց ցեղասպանության ընթացքում և հետո յուրացված հայկական ունեցվածքի խնդիրը[2]: Այս գրքում քննության է առնվել Լոզանի պայմանագրի այն հոդվածները, որոնք առնչվում են հայերի լքյալ գույքերին: Լոզանի պայմանագրով, Թուրքիան ընդունել է, որ իր կողմից բռնագրավված լքյալ գույքերը ետ է վերադարձնելու տերերին, եթե նրանք ողջ են, կամ՝ նրանց ժառանգներին: Լոզանի պայմանագրի հոդվածների կիրառումը թույլ չտալու և այդ պայմանագրի հոդվածների հիման վրա Ազգերի լիգայի միջամտության հնարավորությունը բացառելու նպատակով՝ 1923 և 1927 թվականներին Թուրքիայի քեմալական իշխանությունները ընդունեցին օրենքներ, որով զրկեցին Արևմտյան Հայաստանից և Կիլիկիայից տարագրված հայերին իրենց պապենական հայրենիքը վերադառնալու իրավունքից: Այս օրենքները հանրապետական իշխանություններին հնարավորություն տվեցին ամբողջապես տիրանալու հայերի թողած շարժական և անշարժ ունեցվածքին[3]:

Թաներ Աքչամը և Ումիթ Քուրտը գտնում են, որ եթե Թուրքիայի Հանրապետությունը ճանաչի 1915 թվականի հանցագործությունը, հարկադրված կլինի ընդունել հայերի կրած վնասները հատուցելու անհրաժեշտությունը: Այդ իսկ պատճառով նախընտրում է ժխտել Հայոց ցեղասպանությունը[4]:

Այսպիսով՝ ուսումնասիրելով փաստաթղթերը և թուրք պատմաբանների տեսակետները կարելի է կատարել մի հետևություն՝ որ թուրքական ժխտողականության հիմքում ընկած է բռնագրավված հայկական ունեցվածքի հարցը:

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, պ.գ.դ., Վ.Ռ. Բալայանը:

---

[1] *Տե՛ս* ***Սայիթ Չեթինօղլու****, Համաշխարհային արդարությունը և Հայոց ցեղասպանությունը, http://akunq.net/am/?p=31106.*

[2] *Տե՛ս* ***Taner Akçam-Ümit Kurt,*** *Kanunların Ruhu: Emval-i Metruke Kanunlarında Soykırımın İzini Sürmek, Istanbul, 2012. 304*

[3] *Տե՛ս* ***Թաներ Աքչամ****. Լքյալ գույքի մասին բոլոր օրենքներում թե՛ օսմանյան և թե՛ հանրապետական կառավարություններն անընդհատ կրկնել են այն սկզբունքը, թե այդ ունեցվածքի իրական տերերը հայերն են, http://akunq.net/am/?p=26815*

[4] *Տե՛ս* Նույն տեղում: